

Ինչպե՞ս է իրականացվում կոնտակտավորների՝ վարակակիրների հետ շփված անձանց հայտնաբերումը

Կոնտակտավորների՝ վարակակիր հետ շփում ունեցած մարդկանց հայտնաբերումը պարզ, գաղտնի գործընթաց է, որը տասնամյակներ շարունակ օգտագործվում է հանրային առողջության վարչությունների կողմից՝ վարակիչ հիվանդությունների տարածումը դանդաղեցնելու համար: Դուք կարող եք օգնել գործընթացին՝ պատասխանելով մի քանի պարզ հարցերի:

- Եթե Հանրային Առողջության Վարչությունից գանգ կամ հաղորդագրություն եք ստանում, կարևոր է, որ պատասխանեք դրանց: Ձեր հեռախոսի Էկրանին գանգը, հնարավոր է, որ գրանցվի որպես "LA PublicHealth" կամ 1-(833) 641-0305: Ձեզ կհարցնեն ձեր առողջական վիճակի մասին և թե որ վայրերում եք գտնվել:
- Եթե դուք ստանում եք Լոս Անջելեսի Շրջանի Առողջության Պատասխանատուի Հրամանը և դեռևս չեք ունեցել կոնտակտավորների հայտնաբերման շուրջ հարցազրույց, ապա դուք պետք է 24 ժամվա ընթացքում գանգահարեք Հրամանում նշված հեռախոսահամարով:
- Հանրային Առողջության Վարչության աշխատակիցների հետ զրույցները գաղտնի են: Սա նշանակում է, որ ցանկացած տեղեկություն, որը դուք տրամադրում եք, պահպանվելու է գաղտնի:
- Հանրային Առողջության Վարչության աշխատակիցները կպատասխանեն ձեր ունեցած ցանկացած հարցի և կտրամադրեն նաև օգտակար աղբյուրներ, ինչպիսիք են՝ ինչպես թեստավորվել COVID-19-ի համար, COVID-19-ի դեմ պատվաստման լավագույն ժամանակը, կամ կօգնեն ձեզ գտնել բժիշկ:

Եթե ձեր COVID-19-ի թեստը դրական է



Հանրային Առողջության Վարչությունը կհարցնի՝

1. Ի՞նչ վայրերում եք եղել:
2. Վարակակիր լինելու ընթացքում ո՞ւմ հետ եք շփվել:

- Դուք կստանաք հեռախոսագանգ կամ տեքստային հաղորդագրություն Հանրային Առողջության Վարչությունից՝ հարցազրույց անցկացնելու համար: Պատասխանեք հեռախոսին գանգ ստանալու դեպքում և/կամ լրացրեք առցանց հարցազրույցի հարցումը տեքստային հաղորդագրություն ստանալուց հետո:
- Կապ կհաստատվի այն մարդկանց հետ, որոնց մասին դուք կհայտնեք Հանրային Առողջության Վարչությանը, բայց նրանց չի ասվի ձեր անունը, կոնտակտային տվյալները կամ այն, որ դուք վարակված եք COVID-19-ով: Նրանց ձեր մասին ոչինչ չի ասվի. կասվի միայն, որ նրանք շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ:

Ավելին իմանալու համար տե՛ս՝ Ցուցումներ Մեկուսացման Համար

- Սկանավորեք QR կոդը կամ
- Այցելեք ph.lacounty.gov/covidisolation:



Եթե դուք շփվել եք COVID-19-ով վարակված անձի հետ



Հանրային Առողջության Վարչությունը կհարցնի՝

1. Արդյո՞ք COVID-19-ի ախտանիշներ ունեք կամ արդյո՞ք թեստ եք հանձնել:
2. Այն վայրերի մասին, որտեղ, հնարավոր է, որ եղել եք:

- Որպեսզի ձեզ չշփոթեն այլ մարդու հետ, խնդրում ենք ներկայացնել ձեր ամբողջական ու ճշգրիտ տվյալները:
- Հանրային Առողջության Վարչությունը կարող է գանգահարել ձեզ ավելի քան մեկ անգամ՝ ճշտելու. թե ինչպես եք:
- Ձեզ տեղեկատվություն կտրամադրեն ձեր հետագա քայլերի մասին՝ հիմնվելով ձեր պատասխանների վրա:

Ավելին իմանալու համար տե՛ս՝ Ցուցումներ Կոնտակտավորների Համար

- Սկանավորեք QR կոդը կամ
- Այցելեք ph.lacounty.gov/covidcontacts:

